

ՕԳՈՍՏՈՍ 2019

# ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ





<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>4</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում .....	11
1.3. Ջրահեռացման համակարգ .....	12
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	13
1.5. Էներգահամակարգ .....	14
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	15
<b>2. Առևտրային տնօրինություններ</b> .....	<b>16</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	17
2.2. Հասույթ .....	17
2.3. Գանձում .....	20
2.4. Դեբիտորական պարտքեր .....	20
2.5. Ջրաչափեր .....	22
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում ....	23
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>24</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	25
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	26
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	29
3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ .....	29
3.5. Ջրատար համակարգի բարելավում .....	30
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>31</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն</b> .....	<b>34</b>
5.1. Փաստաթղթերի մշակում .....	35
5.2. Դասընթացներ /սեմինարներ .....	35
5.3. Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության հետ ...	36
5.4. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	36

ՀԱՅԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



# 1.1 ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի վերակառուցման, ինչպես նաև ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

## Քաղաք Երևան

● Մաշտոցի տեղամասի Դավթաշեն 4-րդ թաղամասում օդակաձև ջրամատակարարման ցանցի  $D=250$ մմ,  $L=50$ մ հատվածը անցնում էր ավտոտնակների տակով և վթարված էր: Վթարը վերացնելու նպատակով այդ ջրագծի  $L=50$ մ հատվածը երկու կողմից խցափակվել է ու շահագործումից հանվել: Աշխատանքի արդյունքում խնայվել է  $Q=1$ լ/վ ջրաքանակ:



Դավթաշեն 4րդ թաղամասի ջրամատակարարման սխեմա



Մարյան 24 շենքի ջրամատակարարման սխեմա

● Արաբկիրի տեղամասում Մարյան 24 շենքի մոտ  $D=80$ մմ պողպատյա ջրագծի վրայի վթարը վերացնելու նպատակով այդ ջրագծի մեջ ներսրսկվել է  $D=63$ մմ,  $L=15$ մ պոլիէթիլեն խողովակ: Աշխատանքի արդյունքում շահագործումից հանվել է  $D=80$ մմ,  $L=15$ մ հին ջրագիծ ու խնայվել է  $Q=0.5$ լ/վ ջրաքանակ:



Մոսե փողոցի ջրամատակարարման սխեմա

● Արաբկիրի տեղամասում Մոսե փողոց 8 շենքի ուղղությամբ խցափակումով շահագործումից հանվել է  $D=80$ մմ,  $L=25$ մ քայքայված հին ջրագիծ: Աշխատանքի արդյունքում խնայվել է  $Q=0.5$ լ/վ ջրաքանակ:



Քանաքեռ 2րդ փողոց 2րդ նրբանցքի ջրամատակարարման սխեմա

● Զեյթունի տեղամասում Քանաքեռ 2րդ փողոց 2րդ նրբանցք և Թբիլիսյան խճուղի խաչմերուկում փոխարինվել է վթարված  $D=50$ մմ,  $L=15$ մ պողպատյա հին ջրագիծը, նոր  $D=32$ ,  $L=15$ մ պոլիէթիլեն ջրագծով: Աշխատանքի արդյունքում խնայվել է  $Q=0.5$ լ/վ ջրաքանակ:

## Քաղաք Գյումրի



Ղուկասյան 1 շենքի ջրամատակարարման սխեմա

● Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոցում ՎՋԵԲ-ի իրականացվող փողոցաշինական ծրագրի շրջանակներում վերը նշված փողոցում ջրամատակարարման հին ցանցի ուսումնասիրություններով պարզ դարձավ, որ Գյումրու Օնկոլոգիական դիսպանսերը, իր հիմնական սնուցման ջրագծից բացի ունի ևս մեկ սնուցման ջրագից, որը անցկացվել է Վ.Սարգսյան փողոցով: Քանի որ հիմնական սնուցման աղբյուրը ամբողջությամբ բավարարում է դիսպանսերի ջրի պահանջարկին, ուստի Վ.Սարգսյան փողոցով անցնող ջրագիծը որոշվեց հանել շահագործումից միացման տեղում խցափակելով այն: Արդյունքում շահագործումից հանվեց  $D=150$ մմ  $L=150$ զմ պողպատե խողովակ, խնայելով 0,9լ/վ ջրաքանակ:

● Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 1 շենքի բնակիչներից ահագանգ ստացվեց, որ շենքի բակում առկա է ջրագծի վթար: ՎՋ-ի աշխատանքային խմբի և գոտիավորման բաժնի աշխատակիցների տեղում կատարած ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ վթարը տեղի էր ունեցել շենքը սնուցող հին  $D=100$ մմ պողպատե խողովակի վրա, որը նոր ջրագիծ անցկացնելուց հետո չէր ապամոնտաժվել: Ուստի որոշվեց այն ամբողջությամբ հանել շահագործումից: Արդյունքում շահագործումից հանվեց  $D=100$ մմ  $L=100$ զմ պողպատե խողովակ, խնայելով 0,3լ/վ ջրաքանակ:



Վ.Սարգսյան-Սափյան փողոցների ջրամատակարարման սխեմա



Սահմանապահների փողոցի ջրամատակարարման սխեմա

● Գյումրի քաղաքի Սահմանապահների փողոցում տեղի ունեցաց վթարի ուսումնասիրություններով պարզվեց, որ վթարված խողովակը տվյալ փողոցում առկա նախկին տնակային ավանը սնուցող ջրագծի վրա էր, որը միավցված էր նոր ջրամատակարարման ցանցին: Քանի որ տնակային ավանը վաղուց չկար, ուստի այն որոշվեց խցափակել միացման կետում: Արդյունքում շահագործումից հանվեց  $D=150$ մմ  $L=450$ զմ խողովակ, խնայելով շուրջ 1լ/վ ջրաքանակ:

● Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոցում ՎՋԵԲ-ի իրականացվող փողոցաշինական ծրագրի շրջանակներում վերը նշված փողոցում ջրամատակարարման հին ցանցի ուսումնասիրություններով պարզ դարձավ, որ Գյումրու Վ.Սարգսյան փողոցում գտնվող «Իմպերիալ» արագ սննդի կետի ջրագիծը միացված է  $D=600$ մմ թուջե խողովակին և հատում է Վ.Սարգսյան փողոցը: Քանի որ փողոցը հիմնանորոգվում է, հետագա վթարներից խուսափելու համար, որոշվեց այն խցափակել միացման կետում և անցկացնել նոր ջրագիծ: Արդյունքում շահագործումից հանվեց  $D=150$ մմ  $L=450$ զմ պողպատե խողովակ:



Վ.Սարգսյան-Սափյան փողոցների ջրամատակարարման սխեմա

● Գյումրի քաղաքի Տիֆրյազև փողոցում վթարված խողովակը ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ վթարը տեղի է ունեցել  $D=100$ մմ թուջե խողովակի վրա: Գոտիավորման բաժնի աշխատակիցների կողմից կատարվեցին ուսումնասիրման աշխատանքներ՝ պարզելու սնուցման աղբյուրը: Պարզվեց, որ այն ԽՍՀՄ տարիներին կառուցված է եղել կաթսայատուն հարակից տներ ջուր մատակարարելու համար: Քանի որ կաթսայատունը վաղուց չի գործում իսկ հարակից տները օգտվում են ջրամատակարարման նոր համակարգից, ուստի այն որոշվեց խցափակել միացման կետում: Արդյունքում շահագործումից հանվեց  $D=100$ մմ  $L=300$ զմ թուջե խողովակ, ինսայելով  $0,6$  լ/վ ջրաքանակ:



Տիֆրյազև փողոցի ջրամատակարարման սխեմա

● Գյումրի քաղաքի Գերցեն փողոցում ՎԶԵԲ-ի իրականացվող փողոցաշինական ծրագրի շրջանակներում վերը նշված փողոցում ջրամատակարարման հին ցանցի ուսումնասիրություններով պարզ դարձավ, որ փողոցով է անցնում  $D=300$ մմ թուջե խողովակի  $50$ զմ հատված: Քանի որ փողոցը հիմնանորոգվում է, հետագա վթարներից խուսափելու համար որոշվեց այն խցափակել փողոցից դուրս: Քանի որ խցափակումից հետո հարակից տների բնակիչները կջրազրկվեին, ուստի նրանց համար անցկացվեց  $D=63$ մմ  $L=50$ զմ,  $D=63$ մմ  $L=46$ զմ,  $D=63$ մմ  $L=45$ զմ ՊԷ նոր ջրագիծ:



Գերցեն փողոցի ջրամատակարարման սխեմա



Տ. Մեծ փողոցի ջրամատակարարման սխեմա

● Գյումրի քաղաքի Տ.Մեծ փողոցում ՎԶԵԲ-ի իրականացվող փողոցաշինական ծրագրի շրջանակներում  $D=160$ մմ ՊԷ նոր ջրագիծը  $D=90$ մմ ՊԷ նոր ջրագծին կապող  $D=160$ մմ ՊԷ ջրագիծը որոշվեց անջատել, ջրագծի անարդյունավետ լինելու պատճառով: Արդյունքում շահագործումից հանվեց  $D=160$ մմ ՊԷ  $L=20$ զմ ՊԷ խողովակ:

● Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 119 շենքի մոտ խցափակման եղանակով շահագործումից հանվեց թիվ 45 դպրոցի հին ջրամատակարարման համակարգը: Արդյունքում շահագործումից հանվեց  $D=50$ մմ ՊԷ  $L=100$ զմ ՊԷ խողովակ:



Երևանյան խճուղու ջրամատակարարման սխեմա

## Քաղաք Վանաձոր

● Վանաձոր քաղաքի Հակոբյան թաղամասի և Գայի փողոցի ջրամատակարարումը իրականացվում էր օրական 4-5ժ տևողությամբ: Հակոբյան թաղամասի և Գայի փողոցի ջրամատակարարումը բարելավելու ուղղությամբ ս/թ 02.08-06.08 ժամանակահատվածում Լոռի տեղամասի և գոտիավորման խմբի հետ համատեղ կատարվեցին հետևյալ աշխատանքները. շահագործումից հանվեց d-200մմ L-600մ Հակոբյան թաղամասում, պողպատե d-200մմ L-200մ Գայի փողոցում: Մնացած հատվածում միացուճներ տրվեցին Հակոբյան թաղամասը սնուցող շուրջօրյա ջրամատակարարման ցանցից, Գայի փողոցի հատվածում փողոցը սնուցող շուրջօրյա ջրամատակարարման ցանցից՝ ապահովելով շուրջօրյա ջրամատակարարում:



Հակոբյան թաղամասի ջրամատակարարման սխեման



Գայի փողոցի ջրամատակարարման սխեմա

## Քաղաք Արթիկ



Գործարանային փողոցի ջրամատակարարման սխեմա

● Արթիկ քաղաքի Գործարանային փողոցով անցնող D=300մմ, L=470մ թուջե հին ջրագիծը խցափակումով շահագործումից հանվել է, իսկ ջրագրկված բաժանորդների ջուրը վերականգնելու համար, կառուցվել է d=63մմ, L=20մ պոլիէթիլեն ջրագիծ: Աշխատանքի արդյունքում խնայվել է Q=3լ/վ ջրաքանակ:

## Գեղարքունիքի մարզ

● Քաղաք Սևան Կոմիտասի փողոցում իրականացված վթարառորոնողական աշխատանքների արդյունքում D=200մմ թուջե և D=50մմ պողպատե ջրագծերի վրա հայտնաբերվել և կարանահպման և ճեղքի գողման միջոցով վերացվել է թվով 2 վթար՝ խնայելով մոտ Q= 4 լ/վ ջրաքանակ:

«Վարդենիս» շահագործման տեղամասի սպասարկման տարածքում գտնվող «Վարդենիս» հին ՕԿՋ-ի մոտ գոտիավորման խմբի և տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են վթարառորոնողական աշխատանքներ, ինչի արդյունքում հայտնաբերվել և ճեղքի գողման միջոցով վերացվել է d=150մմ պողպատե ջրագծի վրա առկա վթարը, խնայելով մոտ Q= 3 լ/վ ջրաքանակ:

Ե Քաղաք Ճամբարակ Շահագործման տեղամասի աշխատակիցների կողմից Ազատամարտիկների թիվ 3 թաղամասը սնող D=100մմ պողպատե ջրագծի վրա հայտնաբերել և ճեղքերի գողման միջոցով վերացվել է թվով 2 գաղտնի վթար, որի արդյունքում խնայվել է մոտ Q= 4 լ/վ ջրաքանակ, ինչպես նաև կարգավորվել է թաղամասի կանոնավոր ջրամատակարարումը:







### Սյունիքի մարզ



«Միսիան» շահագործման տեղամասի և գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից Շիրվանգադե փողոցում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում հայնտաբերվել և խցափակվել են թվով 2  $D=100$ մմ անօգտագործելի ջրագծեր, որի արդյունքում խնայվել է  $Q=8$  լ/վ ջրաքանակ:

### Արարատի մարզ

● «Արարատ» շահագործման տեղամասի սպասարկման տարածքում տեղամասի և գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում Մխչյան գյուղում գտնվող  $D=275$ մմ պողպատե խողովակի վրա հայտնաբերվել և ճեղքերի գոդման միջոցով վերացվել է թվով 2 գաղտնի վթար, որի արդյունքում խնայվել է  $Q=7$  լ/վ ջրաքանակ:



● «Արտաշատ» շահագործման տեղամասի սպասարկման տարածքի Մովսես Գորգիսյան փողոցի  $D=63$ մմ  $L=170$ մ անորակ պոլիէթիլենային ջրագիծը (Վեդիի արտադրության), որը կառուցվել էր վերջերս, գտնվում էր խիստ վթարային վիճակում: Ամբողջովին քայքայված խողովակների վրա հաճախակի տեղի ունեցող վթարները հնարավոր չէր վերացնել պատշաճ կերպով և ժամանակին, ինչպես նաև դրանց պատճառով առաջանում էին ջրակորուստներ, ջրագծերում ճնշման անկուճսեր և հետագա շահագործման անհնարինություն:

Ջրամատակարարման պատշաճ ապահովման, վթարների բացառման և ջրագծի թողունակության բարձրացման համար «Արտաշատ» շահագործման տեղամասի աշխատակիցների կողմից կոռոզիայի ենթարկված խողովակները փոխարինվել են  $d=50$ մմ  $L=170$ մ պոլիէթիլենային խողովակներով: Կատարված աշխատանքների արդյունքում ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, խնայվել է ջրաքանակ, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը:

● «Արարատ» շահագործման տեղամասի սպասարկման տարածքում գտնվող հ. Ուրցաձոր, Տիգրան Մեծ փողոցը սնուցող  $D=100$ մմ  $L=980$ մ թուջե ջրագիծը գտնվում էր խիստ վթարային վիճակում: Ամբողջովին քայքայված խողովակների վրա հաճախակի տեղի ունեցող վթարները հնարավոր չէր վերացնել պատշաճ կերպով և ժամանակին, ինչպես նաև դրանց պատճառով առաջանում էին ջրակորուստներ, ջրագծերում ճնշման անկուճներ և հետագա շահագործման անհնարինություն:

Խնդրի կարգավորման, բնականոն ջրամատակարարման ապահովման և ջրագծի թողունակության բարձրացման համար «Արարատ» շահագործման տեղամասի աշխատակիցների կողմից կոռոզիայի ենթարկված խողովակները փոխարինվել են  $D=110$ մմ  $L=980$ մ պոլիէթիլենային խողովակներով:

Աշխատանքների կատարման ընթացքում փոխարինվել են նաև հին ջրագծերից սնվող թվով 40 բաժանորդների անհատական միացումները՝ կառուցելով  $d=20$ մմ  $L=470$ մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենային ջրագծեր, ինչպես նաև սահմանագատման կետերում տեղադրվել են նոր ջրաչափական դիտահորեր: Կատարված աշխատանքների արդյունքում ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, խնայվել է ջրաքանակ, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը:



● «Մասիս» շահագործման տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Նոր Խարբերդ-Նոր Կյուրի  $D=110$ մմ  $L=830$ մ պոլիէթիլենային ջրագիծը գտնվում էր խիստ վթարային վիճակում: «Մասիս» շահագործման տեղամասի աշխատակիցների կողմից կոռոզիայի ենթարկված խողովակները փոխարինվել են  $D=90$ մմ  $L=830$ մ պոլիէթիլենային խողովակներով:

Ջրագծերի փոխարինման ընթացքում Նոր Կյուրի համայնքի 18 փողոցի  $D=75$ մմ  $L=300$ մ /Վեդի արտադրության/ վթարային պեթ ջրագիծը փոխարինվել է  $D=63$ մմ  $L=90$ մ մ  $D=50$ մմ  $L=210$ մ պեթ խողովակներով, ինչպես նաև փոխարինվել է հին ջրագծերից սնվող թվով 6 բաժանորդների անհատական միացումները:

Կատարված աշխատանքների արդյունքում ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, խնայվել է 1-1,5լ/վրկ ջրաքանակ, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը:



Աղյուսակ 1՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1,492
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	26,557
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	17,585
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	2,095
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	61
Շահագործումից հանված ջրագիծ	մ	3,960
Կառուցված ջրագիծ	մ	3153.8
Կառուցված կոյուղագիծ	մ	706.6
Վերացված գաղտնի վթարներ	հատ	36
Փոխարինված փական	հատ	240
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	656
Մաքրված դիտահոր	հատ	1,084
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	16.93
<i>Վերացված վթարներ</i>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1,866
Ջրահեռացման ցանցում	հատ	3,869
Պոմպակայաններում	հատ	199
Մաքրված անձրևընդունիչ	հատ	517

Օգոստոս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2՝ Վերացված վթարների հակիրճ նկարագիր

Ընդամենը	Պոլիէթիլենային խողովակներ/հատ/	Մետաղական խողովակներ/ հատ/	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
612	1032	517	

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է օգոստոս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3՝ Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	258	58	13	12	4	7	9	0	1	362
Փոխարինված	162	12	2	0	3	1	0	0	1	181
Տեղափոխված	3	1	0	0	0	0	0	0	0	4
Տեխ. Ակտ	429	105	25	16	3	14	9	0	1	602
Ընդամենը	852	176	40	28	10	22	18	0	3	1,149

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 1,149 ջրաչափ: Կատարված աշխատանքների 74,15 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

### 1.3. ԶՐԱՅԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Օգոստոս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև՝ Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4՝ Աշխատանքների հակիճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում
		մ	հատ	գծ/մ
1	Արաբկիր	1776	240	24
2	Մաշտոց	735	203	4
3	Շահումյան	1705	475	2.5
4	Զեյթուն	410	159	16
5	Շիրակ	1100	1	113
6	Ալավերդի	1690	48	24
7	Ապարան	0	39	15
8	Արթիկ	0	7	18
9	Աշոցք	0	10	0
10	Բերդ	30	0	0
11	Իջևան	1095	0	0
12	Լոռի	2492	0	0
13	Նոյեմբերյան	660	0	3
14	Սպիտակ	50	0	0
15	Ստեփանավան	0	2	0
16	Թալին	0	0	6
17	Տաշիր	120	8	0
18	Էջմիածին	50	0	6
19	Չարենցավան	1775	18	0
20	Աբովյան	2410	122	0
21	Հրազդան	2360	37	0
22	Աշտարակ	2450	42	1.5
23	Կենտրոն	110	207	4
24	Հյուսիս	250	273	24
25	Հարավ	0	319	6
26	Էրեբունի	220	172	31
27	Արմավիր	0	101	0
28	Արտաշատ	0	50	18
29	Արարատ	305	60	0
30	Մասիս	0	48	0
31	Գավառ	265	46	0
32	Սևան	0	91	347.6
33	Մարտունի	0	19	12
34	Վարդենիս	0	12	0
35	Ճամբարակ	0	15	0
36	Դիլիջան	0	46	44
37	Վայք	570	14	0
38	Եղեգնաձոր	20	7	0
39	Զերմուկ	0	29	0
40	Սիսիան	0	90	41
41	Գորիս	0	22	0
42	Կապան	0	75	12
43	Մեղրի	0	28	0
	Ընդամենը	22648	3135	772.6

## 1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.

- Ջերմուկի կեղտաջրերի մաքրման կայանում վթարվել էր մանր ճաղավանդակի ռեդուկտորը, ինչի հետևանքով առկա էր յուղի արտահոսք: Աշխատակիցների կողմից փոխարինվել են խծուծները, կարգաբերվել են մանր ճաղավանդակի քերիչ սանրերը, ստուգվել են բոլոր սարքավորումները և արդյունքում ԿՄԿ-ն աշխատում է անխափան: Ջերմուկի կոյուղու պոմպակայանում փոխարինվել են անջատիչի վթարված ապահովիչները և պոմպակայանը աշխատում է անխափան:

- Մարտունի կեղտաջրերի մաքրման կայանում վթարվել էր խոշոր մասնիկների ճզմիչ լվացման կափույրը, ինչի հետևանքով ջուրը անդադար հոսում էր: Աշխատակիցների կողմից վերանորոգվել է կափույրը, որը ներկայումս աշխատում է բնականոն ռեժիմով: Ձննվել են նաև օդամուղի գոնիչները և ռոտորի թերթիկները:

- Դիլիջան կոյուղու մաքրման կայանում վերանորոգվել են ավազ տեղափոխող կոնվեյերի ժսասված մալուխները:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե՛ էլեկտրական, թե՛ մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:

Ստորև աղյուսակում 5-ում ներկայացված են մանրամասներ:



Աղյուսակ 5՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը	Մաքրված կեղտաջրերի ծավալը	Կեղտաջրից առանձնացած կեղտ
			մ <sup>3</sup>	մ <sup>3</sup>	տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	68,833	19.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	97,228	27
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	142,917	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	148,133	10
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	103,863	19.8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	18,273	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	12,022	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	17,800	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	26,000	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	5,938	0	0

## 1.5. ԷՆԵՐԳԱՅԱՍՏՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6՝ Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակը ըստ աշխատանքի նկարագրի
պոմպի աշխատանքի զննում կարգավորում	88
էլ. սարքերի զննում կարգավորում	16
աշխատանքները կատարվել են Հորիզոն ՄՊԸ կողմից, առանցքակալի տեղադրում, բանող անվի փոխարինում, վերանորոգման հավաքածուի տեղադրում	1
վերանորոգման հավաքածուի տեղադրում	5
ավտոմատիկայի կառավարիչ	3
լիսեռի տեղադրում	1
առանցքակալի տեղադրում	7
փականի տեղադրում	1
բաքի միացման դետալներ	2
աշխատանքները կատարվել են Հորիզոն ՄՊԸ կողմից, լիսեռի փոխարինում	17
բանող անվի փոխարինում	3
բանող անվի փոխարինում	4
շարժիչի վերանորոգում	7
Ֆազի բացակայության ռեկե	2
բարձր ճնշման ռեկեի փոխարինում	7
խցուկի տեղադրում	2
թողարկիչի տեղադրում	2
պոմպի տեղադրում	1
մեմբրանի տեղադրում	1
ցածր ճնշման ռեկեի փոխարինում	3
էլ. հոսանքի լարերի նորոգում	1
էլ. ավտոմատ անջատիչի կարգավորում	
Ընդամենը	174

## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Օգոստոս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Արևելք» ՍՍ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար օգոստոս ամսվա ընթացքում նորոգվել են թվով 8 մեքենաների շարժիչները մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 5 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճուպանները:

Առջևի համակարգի նորոգում է կատարվել թվով 4 մեքենաների վրա, փոխարինվել են գնդավորներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի գսպանակներ և հարվածամեղմիչներ:

Հետևի համակարգի նորոգումներ են կատարվել թվով 2 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսատնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 4 մեքենաների վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 2 մեքենաների վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 19 անվաղողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Փոխարինվել են թվով 98 մեքենամեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր և գտիչներ:

Թվով 7 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորերով:

Նորոգվել է թվով 6 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիվները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենամեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի գսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսատնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 13 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր: Թվով 4 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման մղիչներ և ռետինե խողովակներ: Վերանորոգվել են թվով 4 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուփ լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 5 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Ա.թ. սպրիլից կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ՄՏՍՏ սպասարկման տարածքներից Աբովյան, Էջմիածին, Մասիս և Սպարան տեղամասերը դարձան ԵՏՍՏ սպասարկման տարածքներ մոտ 65,000 բաժանորդներով:

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել աղյուսավետ կազմակերպման համար ԵՏՍՏ-ում ներգրավվել են 259, իսկ ՄՏՍՏ-ում՝ 59 պայմանագրային աշխատակից: 01.09.2019 թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՏ-ում 320,766, իսկ ՄՏՍՏ-ում՝ 169,212 պայմանագիր: Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները օգոստոս ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2018թ. հունվար - 2019թ. օգոստոս ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	426,190	308,111	72,3
		Իրավաբանական անձ	19,867	12,655	63,7
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	196,467	162,855	82,9
		Իրավաբանական անձ	8,117	6,357	78,3
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	622,657	470,966	75,6
		Իրավաբանական անձ	27,984	19,012	67,9

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները օգոստոս ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	462,295	358,452	77,5
		Իրավաբանական անձ	23,081	16,078	69,7
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	253,724	196,467	77,6
		Իրավաբանական անձ	9,797	8,117	81,9
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	716,019	554,919	77,5
		Իրավաբանական անձ	32,878	24,195	73,6

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): ԵՏՍՏ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 164 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՏ սպասարկման տարածքում՝ 142 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ

Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՏ-ի «Շենգալիթ», «Հյուսիս», «Շահունյան» և ՄՏՍՏ-ի «Լոռի», «Շիրակ» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:

Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Օգոստոս ամսվա ընթացքում ԵՏՍՏ-ում ստուգաչափվել է 3,810, իսկ ՄՏՍՏ-ում՝ 1,544 ջրաչափ:


h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 06.2019
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	2693	877	143	3,713
		Իրավաբանական անձ	65	29	3	97
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	851	512	89	1452
		Իրավաբանական անձ	53	32	7	92
	Ընդամենը		3,662	1,450	242	5,354

Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել 166,727 մ<sup>3</sup> վերահաշվարկված հասույթ (70% Երևան և 30% մարզեր):

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2019թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:


Ստուգաչափված ջրաչափ (Երևան)




Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)



Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)




Օգոստոսին ընկերության առևտրային տնօրինությունների կողմից ձևավորած հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև աղյուսակի տեսքով.


Տարածաշրջան	Առաջադրանք հազ.մ <sup>3</sup>	Փաստացի հազ.մ <sup>3</sup>	Տարբերություն %, հազ.մ <sup>3</sup>
Երևան Մարզեր	9449.1	9711.2	2.77
Ընդամենը	13,003.1	13,413.2	3.3

Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



### 2.3. ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Օգոստոս ամսին գանձումը ԵՏՍՍ-ում կազմել է 1,518,552 մլն դրամ, իսկ ՄՏՍՍ-ում՝ 499,129 մլն դրամ:

Նախորդ ամսվա ձևավորած հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

Ընկերության ձևավորած հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Գանձում	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
Երևան	Առաջադրանք/մլն դրամ	1,111,564	1,068,993	1,023,278	1,136,162	1,200,614	1,250,688
	Հավաքագրում/մլն դրամ	961,127	1,066,773	1,207,447	1,265,886	1,383,789	1,278,933
	%	86	100	118	111	115	102
Մարզեր	Առաջադրանք/մլն դրամ	485,310	528,579	519,889	519,889	459,526	529,347
	Հավաքագրում/մլն դրամ	394,761	428,304	489,054	446,494	435,710	416,331
	%	81	81	94%	86	95	79
Ընդամենը	Առաջադրանք/մլն դրամ	1,596,874	1,597,572	1,543,167	1,656,051	1,660,140	1,780,035
	Հավաքագրում/մլն դրամ	1,355,888	1,495,077	1,696,502	1,712,379	1,819,499	1,695,264
	%	85.0	93.6	109.9	103.4	19.6	95.2

Տարածաշրջան	Գանձում	Հուլիս	Օգոստոս
Երևան	Առաջադրանք/մլն դրամ	1,421,559	1,554,117
	Հավաքագրում/մլն դրամ	1,426,645	1,518,552
	%	100	97
Մարզեր	Առաջադրանք/մլն դրամ	529,647	561,116
	Հավաքագրում/մլն դրամ	511,692	499,129
	%	97	89
Ընդամենը	Առաջադրանք/մլն դրամ	1,780,035	2,115,233
	Հավաքագրում/մլն դրամ	1,695,264	2,017,681
	%	95.2	95.4

### 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Օգոստոս ամսվա ընթացքում ԵՏՍՍ կողմից կնքվել է թվով 124 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 10.18 մլն դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՍ կողմից՝ թվով 122 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 6.7 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2018-2019 թ. օգոստոս ներառյալ		Բավարարված		Մերժված		2017-2019 թթ. ընթացիկ գործեր		2017-2019 թթ. ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
4,815	539,836,413	3,369	400,711,895	108	8,716,812	6,228	658,600,116	1,851	142,702,360

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 70 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 2 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.


Տարածաշրջան	Պարտքը 01.09.2019թ. դրությամբ (մլն. դրամ)	Այդ թվում օգոստոս ամսվա հասույթ (մլն. դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	4,174.6	1,687.3
Բնակիչ-բաժանորդներ	2,860.5	1,087.5
Իրավաբանական անձեր	1,314.1	599.8
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	1,848.9	613.1
Բնակիչ-բաժանորդներ	1,417.7	449.7
Իրավաբանական անձեր	431.1	163.4
Ընդամենը, այդ թվում	6023.5	2300.4
Բնակիչ-բաժանորդներ	4278.2	1537.2
Իրավաբանական անձեր	1745.2	763.2

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:


ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 237.6 մլն դրամը կուտակվել է երեք բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը, «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը և Կոնդի Առանձնատների Տնտեսություն ՊՈԱԿ-ը:

ՄՏՍՏ մասով հանրապետական բյուջեի պարտքը 01.09.2019թ. դրությամբ կազմում է մոտ 95.0 մլն դրամ (Պաշտպանության նախարարություն, ՔԿՀ և այլն), որը կվճարվի առաջիկայում:

2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն. դրամ (Երևան)



2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Մարզեր)



## 2.5 ԶՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.09.2019 թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	447,899	357,061	79.7	22,395	16,072	71.7
	Առանց ջրաչափի	14,396	1,391	9.6	686	6	0.9
Մարզեր	Ջրաչափով	231,703	171,049	73.82	9,553	6,986	73.13
	Առանց ջրաչափի	22,021	1,428	6.48	244	4	1.64
Ընդամենը	Ջրաչափով	679,602	528,110	77.71	31,948	23,058	72.17
	Առանց ջրաչափի	36,417	2,819	7.74	930	10	1.08

Տվյալների բազայում 01.09.2019թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	586,496	291,849	49.7	25,365	5,694	22.4
Մարզեր	265,324	68,912	25.97	10,853	1,846	17.00
Ընդամենը	851,820	360,761	42.35	36,218	7,540	20.82

Առաջնահերթությամբ՝ խստիանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4,152, իսկ մարզերում՝ 1387 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 138, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 441 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների փոշին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափների ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափների քանակ	%
գ.Քասախ	2235	1754	78.5
գ.Պռոշյան	1527	961	62.9
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5124	1349	26.3

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Օգոստոս ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքները շարունակվել են Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 5,735, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3,354, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 508, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 818, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 453, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 417 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 631 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	103	45,162	7,825,486
Մարզեր	200	150,525	23,842,843
Ընդամենը	303	195,687	31,668,329

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ






### 3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի օգոստոսի ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.1 %, ինչն նույն է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն



Հաշվետու ամսվա ընթացքում շահագործման տարածաշրջանների տնօրինություններում թվով 56 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ձնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 22-ը անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից:

Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ձնշման լոգերների գրաֆիկները:






### 3.2. ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 83.365 կՎտ/ժ. (15,40%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

#### Երևան քաղաքի բաղային պոմպեր




● Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

● Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 92 հասցե, և թերություններ չեն հայտնաբերվել:

● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսն նվազել է 4,535,98 կՎտ/ժ կամ 17,6 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

### Էջմիածին




● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ. էներգիայի ծախսը նվազել է 4,912 կՎտ/ժ կամ 13,4 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

### Շիրակ




● Օգոստոս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 750,127 կՎտ/ժամ կամ 28,31 % (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

*Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա*




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 163,548 կՎտ/ժամ կամ 5,54 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա*



● Օգոստոս ամսին էներգիայի ծախսը ավելացել է 1,040,621 ԿՎտ.ժ կամ 15,39 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ

*«Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպառած էլ. էներգիա*




### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են օգոստոս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.


Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	413
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	85
Նոր կետերի ավելացում ֆիզիկական բաժանորդներ	հատ	112
Նոր կետերի ավելացում իրավաբանական բաժանորդներ	հատ	28
Մոդելավորման աշխատանքներ (փորձնական ընտրվել է Արաբկիրը)	հատ	2
ԱՅ ձևաչափով քարտեզների տպում և տրամադրում	հատ	6
Վթարային ջրանջատումներ (համայնքների քանակ)	հատ	2
Պլանային ջրանջատումներ (համայնքների քանակ)	հատ	4
ՀՀ սեփական, բազմաբնակարանային և իրավաբանական բաժանորդների խմբավորման և լրացման աշխատանքներ (ըստ սպասարկման տարածքի, լոգերի և լոգեր գոտիների, ժամային գրաֆիկի), ֆիզիկական բաժանորդների տվյալների մշակում և մուտքագրում բազա	հատ	124,495

### 3.4. ԿԱՐԳԱԿԱՐՄԱՆ ԽՍՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ամսում կարգավարների խումբը SCADA և LOCATOR համակարգերի միջոցով առցանց հետևել և կառավարել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների անխափան աշխատանքին, ջրամբարների լցվածությանը, ճնշումային լոգերներին, ջրաչափական սարքերի աշխատանքին և բաշխիչ ցանցի ջրում առկա մասցորդային քլորի համապատասխանությանը սահմանված չափաբաժնին:



«Լոկատոր» ծրագրի միջոցով ստացված տվյալներից պարզվել է, որ Կոտայքի մարզում գտնվող «Ուլաշիկ» աղբյուրի ջրաքանակը կտրուկ նվազել է: Այդ մասին տեղեկացվել է «Հրազդան» տեղամասի աշխատակիցներին, որոնց կողմից պարզվել է, որ ջրաչափի գոխը խցանվել էր, ինչն էլ հանգեցրել էր ջրաքանակի նվազման: Զտիչի մաքրման աշխատանքներից հետո ջրաքանակը վերականգնվել է:



### 3.5. ԶՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

#### Արին-Բերդ-Խարբերդ

● Չորս վթարներ են հայտնաբերվել Արին-Բերդ-Խարբերդ ջրատարի վրա՝ գումարային  $\approx 10$ լ/վ ջրաքանակի արտահոսքով:



#### Արզական ջրատար



● Արզական-Քանաքեռ ջրատարի վրա՝ Վերին Պտղնի գյուղի չգործող պոմպակայանի հատվածում, հայտնաբերվել է վթար  $\approx 3-5$  լ/վ ջրաքանակի արտահոսքով: Վթարի հետևանքով առաջացած ջրաքանակի կորուստը օգտագործել է հարակից այգու տերն իր այգին ոռոգելու նպատակով: Այգում կան նաև ապօրինի վիացումներ: «Բելաջիո» ռեստորանային համալիրից դեպի Պտղնի՝ նախկին պ/կ-ի ճանապարհի վրա, առկա է նաև չաշխատող ջրաչափ (D=40մմ) անհայտ ուղղությամբ:



#### Ապարան-Երևան ջրատար

● Ապարան-Երևան ջրատարի վրա՝ Նոր Երզնկա գյուղի վերին հատվածում՝ ՀԷԿ-ի մոտակայքում, առաջացել է վթար, որի ջրաքանակի կորուստը կազմում է  $\approx 5$ լ/վ:



ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Օգոստոսին աշխատանքը հանրային կապերի ապահովման մասով շարունակվել է ներգրավված կազմակերպության «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի /Հիմնադրամ/ ղեկավարությամբ:

Հանրային կապերի բաժինը /ՀԿԲ/ մշտապես տեղեկացրել է Հիմնադրամին ՁԼՄ-ներից ստացող տեղեկատվության ու անհազանգերի մասին և դրանց արձագանքել է համաձայն ստացվող հրահանգների: Արդյունքում այս ընթացքում ապահովվել է 2 հեռուստահաղորդում: Առաջինը ՀՀ, Կենտրոն և Արմայուզ հեռուստաալիքներով նվիրված է եղել Արգավանդ գյուղի գերեզմանոցում ապօրինի հողահատկացումների խնդրին, որը վտանգում է հարակից կոլեկտորի բնական աշխատանքը: Հաջորդը՝ Հանրային հեռուստաալիքով, լուսաբանել է Երևանում թվով մոտ 50 ցայտաղբյուրների վրա փականների տեղադրման «պիլոտային» ծրագիրը, որը գտնվում է ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար Էդվարդ Աղաջանյանի վերահսկողության ներքո: Դրանք նաև տեղադրվել են ընկերության ֆեյսբուքյան էջում և դրական արձագանք ստացել ընթերցողների կողմից:



Նույն ֆեյսբուքյան էջում, որի բաժանորդների քանակն անցնում է 16,000-ը, հաշվետու ամսին նաև մի քանի հրապարակումներ են եղել շինարարական ու վերանորոգման ընթացիկ աշխատանքների մասին: Մասնավորապես, Արարատի մարզի Նոր



Խարբերդ և Նոր Կյուրին գյուղերը սնուցող ջրատարի վերակառուցման, Արարատի մարզի Մրգանուշ գյուղի ներքին ցանցի արդիականացման և ճամբարակում խոշոր վթարի հետևանքների օպերատիվ վերացման մասին:

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամում (ՖՀՄՈՒԿ) վերապատրաստված տեսուչների և ինժեներատեխնիկական կազմի հերթական խմբին ավարտական վկայականների հանձնման հանդիսավոր արարողությանն անդրադարձ է կատարվել լուսանկարաշարով ու հոդվածով:

«Այսօր Մպառող, վաղը Բաժանորդ» տրամաբանության շրջանակներում «Վեոլիա ջուր» ընկերությունը հյուրընկալվել է «Վորլդ Վիժն»-ի կազմակերպած ամառային ճամբարում հանգստացող

երեխաներին: «Երագանքի ճամբար» ամենամյա այս նախաձեռնությունը ամառային հանգիստը կազմակերպելու համար համախմբում է երեխաների տարբեր մարզերից և նպատակ ունի նաև նրանց մոտ զարգացնել կյանքի հմտություններ, փոխանցել նոր գիտելիքներ:

«Վեոլիա ջուր» ընկերության ներկայացուցիչների օգնությամբ նրանք այս անգամ հնարավորություն են ունեցել կատարել մի մեծ «Ջրային ճամփորդություն» և ծանոթանալ, թե ինչ ճանապարհով է ջուրը հասնում իրենց բնակարաններ և, ընդհանրապես, ինչ կենսական նշանակություն ունի այն մեր կյանքում:

Օգոստոսին չի մոռացվել նաև համակարգի աշխատակիցների ու նրանց երեխաների առօրյա կյանքի կազմակերպումն ու լուսաբանումը: Այսպես, «Վեոլիա Ջուր» ընկերության «Արևմուտք» տարածաշրջանային տնօրինությունը շարունակել է բարի ավանդույթը: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս տնօրինության ֆինանսական օժանդակությամբ աշխատակիցների 15 երեխաներ մասնակցել են ամառային ճամբարի: Այստեղ նրանք ոչ միայն զարգացրել են իրենց անձնական հմտությունները, այլև յոթնօրյա ակտիվ և ուրախ հանգիստ վայելել և, իհարկե, մասնակցել Սուրբ Աստվածամոր տոնի





շրջանակներում տեղի ունեցած Խաղողօրհինեքի տոնակատարությանը: Հարկ է նշել նաև, որ այս բոլորի մասին Ֆեյսբուքյան էջից բացի, համապատասխան տեղեկատվություն է տեղադրվել ընկերության պաշտոնական կայքում ու youtube-յան էջում:

Հանրային կապերի բաժինն այս ընթացքում նաև տարբերաբար ջրանջատումների, ապրանքների ու ծառայությունների գնումների, թափուր աշխատատեղերի առկայության մասին հաղորդագրություններ է ուղարկել ՋԼՄ-ներին ու պատկան մարմիններին, կազմել է ամենօրյա մամուլի տեսություն, կապ է պահպանել լրագրողների հետ՝ վերջիններիս բարձրացրած մասնագիտական և անձնական բնույթի հարցերին պատասխանելու համար: Լուծվել են ընկերության տնօրինության կողմից առաջադրված բոլոր մյուս խնդիրները:



**ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**



## 5.1 Փաստաթղթերի մշակում


● ՈԱԱ ծառայությունը, ելնելով Գրուպի Առողջության և Անվտանգության Կառավարման (այսուհետև ԱԱ կառավարում) Ուղեցույցի համապատասխանության գնահատման պահանջներից, լրացրեց ընկերության ԱԱ կառավարման 153 հարցից բաղկացած գնահատման հարցաթերթիկը:

● Իրականացվել են «Առողջության և անվտանգության միջազգային շաբաթ - 2019» միջոցառման նախապատրաստական մասնավորապես այս շրջանակներում նախատեսվող սեմինարի նյութերի մշակման աշխատանքները:


## 5.2. Դասընթացներ/սեմինարներ

● Հաշվետու ամսվա ընթացքում Ընկերության Արևմուտք SS թվով 7 աշխատակից «Նարեկ» գիտահետազոտական ընկերությունում անցավ էլեկտրաանվտանգության 3-րդ խմբի որակավորման դասընթաց, իսկ Արևելք SS թվով 1 աշխատակից անցավ էլեկտրաեռակցման որակավորման դասընթաց:


● Սույն թվականի օգոստոսի 2-ին ՖՀՄՈՒԿ հիմնադրամում տեղի ունեցավ ընկերության ինժեներատեխնիկական անձնակազմի ավարտական քննությունը, իսկ օգոստոսի 26-ին ՖՀՄՈՒԿ հիմնադրամում մասնագիտական վերապատրաստում անցած և կոմբիցիոն մասնագետ տեսուչների ավարտական վկայականների շնորհման արարողությունը:



2018-2019թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՅ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



**2019թ. ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻՆ մասնակցած աշխատակիցների քանակներն ըստ դասընթացների տիպերի**



\* 2019թ. վերապատրաստված աշխատակիցների որոշ մասը մասնակցել է երկամսյա-եռամսյա դասընթացների: ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. ՖՀՄՈՒԿ հիմնադրամում կազմակերպված երկամսյա-եռամսյա դասընթացներին մասնակցել է Ընկերության 115 աշխատակից

**5.3. Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության հետ**

● Համաձայն «Արտականգ իրավիճակներում ՀՀ Արարատի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019թ-ի հիմնական միջոցառումների պլանի» սույն թվականի օգոստոսի 15-ին ՈԱԱ Ծառայության համակարգում «Արտաշատ» տեղամասի շահագործման թիմը մասնակցեց «ԱԻ հետևանքով ք. Արտաշատ, Արազի 12 հասցեում գտնվող եռահարկ բազմաբնակարան շենքի 2-րդ մուտքագծի վրա առաջացած վթարի դեպքում վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությանը: ՈԱԱ Ծառայության կողմից մշակվեց և ընկերության շահագործման պատասխանատուների հաստատմանը ներկայացվեցին ուսումնավարժության անցկացման և գնահատման համար պահանջվող փաստաթղթերը: ՀՏՈՒ-ի անցկացման վերաբերյալ կարգադրություն, օրացույցային և անցկացման պլանները և ամփոփագիր: Ուսումնավարժության նպատակն էր ստուգել արձագանքող ուժերի պատրաստվածությունը, ինչպես նաև կատարելագործել գործնական հմտությունները:

**5.4. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացող միջոցառումների կիրառում**

● Ծառայության անվտանգության պատասխանատուները, Արևմուտք ՏՏ ղեկավարության հետ համաձայնեցնելով, իրականացրեցին արտապլանային անվտանգության ստուգայցներ «Իջևան», «Նոյեմբերյան», «Բերդ» շահագործման տեղամասերում, որի ընթացքում ստուգվեցին աշխատատեղում անվտանգության հրահանգավորման գրանցամատյանները, հրահանգների առկայությունը, գույքագրվեցին վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում կիրառվող ժամանակավոր ճանապարհային նշանները, անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցները: Միաժամանակ տեղում ՈԱԱ Ծառայության պետը շահագործման թիմերի հետ անցկացրեց աշխատանքային պարտականություններից բխող «Աշխատատեղում անվտանգության պահանջները» թեմայով կարճատև սեմինար/հրահանգավորում:

● ՈԱԱ Ծառայության կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ աշխատանքի ընթացքում:





«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադունցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am